Սրահեմ

ISSN 2579-2571

Մանկական քրիստոնեական ամսագիր

6+

4/2021

ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳԱՆՁԵՐ ՓՆՏՐԵԼՈՎ
էջ 6

ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԲԻՆԳՈ
էջ 20

ԳԱՆՁԵՐԻ ՔԱՐՏԵԶ
էջ 21

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

Նկ.Տաղոյան Կոստեցկայա

ԱՄԵՆԱԹԱՆԿԸ

Մեզանից ամեն մեկն ունի մի բան, որը առանձնահատուկ արժեք ունի մեզ համար: «Արահետի» ընթերցողները մեզ պատմել են իրենց կյանքի գանձերի մասին:

Անի 13տ.

Բարև սիրելի Արահետ: Ինձ համար թանկ է Աստված և նրա ներկայությունը իմ կյանքում: Թանկ են նաև ինձ շրջապատող մարդիկ, և այդ պատճառով Արահետ ամսագիրը բաժանում եմ իմ հասակակիցներին, որպեսզի նրանք էլ իմանան Աստծո մասին:

Մերի 12տ.

Ինձ համար թանկ է ընտանիքս: Շատ եմ սիրում Աստծուն և Արահետի միջոցով սիրում եմ Աստծո խոսքը փոխանցել ուրիշներին: Շնորհակալություն, որ կա այս հրաշալի ամսագիրը:

Փոքրիկ տվերդարձներ

Գյուղ Չկալով

Աղյուսակի վրա նշի՛ր, թե որքան կարևոր են քեզ համար կյանքում այս երևույթները (1 շրջանակ՝ գրեթե կարևոր չէ, **5 շրջանակ՝** շատ կարևոր է):

Լավ գնահատականները	○	○	○	○	○	**Շունը**	○	○	○	○	○
Սմարթֆոնը	○	○	○	○	○	**Արևոտ օրը**	○	○	○	○	○
Ծնողները	○	○	○	○	○	**Արձակուրդն ընտանիքի հետ**	○	○	○	○	○
Հավիտենական կյանքն Աստծո հետ	○	○	○	○	○	**Շփումն Աստծո հետ**	○	○	○	○	○
Միշտ օգնության պատրաստ ընկերները	○	○	○	○	○	**Առանց տնային հանձնարարությունների օրը**	○	○	○	○	○
Գրպանի գումարը	○	○	○	○	○	**5000 դրամ խնայատուփում**	○	○	○	○	○
Բարի ուսուցչուհին	○	○	○	○	○	**Հետաքրքիր գիրքը**	○	○	○	○	○
Սիրելի եկեղեցին	○	○	○	○	○	**Հեռուստացույցը**	○	○	○	○	○
Լավ հարաբերությունները քրոջ կամ եղբոր հետ	○	○	○	○	○	**Դասարանում լավ օրինակ լինելը**	○	○	○	○	○
Հաղթանակը խաղում	○	○	○	○	○	**Պիցցա ուտելը**	○	○	○	○	○

Ինչպես արդեն հասկացար քո պատասխաններից՝ «թանկը» միշտ չէ, որ նշանակում է «արժեքավոր»: Ընտանիքն ու ընկերները անհամեմատ ավելի արժեքավոր են, քան նոր հեծանիվը: Կյանքում կան բաներ, որ ոչ մի գնով չես գնի. եկեղեցին, ընտանիքի հետ անցկացրած ժամանակը, Աստծո հետ շփումն ու հավիտենական կյանքը: Ահա այն ամենը, որ ավելի արժեքավոր են, քան աշխարհի բոլոր գանձերը:

ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԸ

Լուիզա Էզաու

Պատմությունն առասպելներ է պահել հայտնի, մեծ, իսկ երբեմն նաև վտանգավոր գանձերի մասին: Դրանց մի մասը համբավ են ձեռք բերել շնորհիվ նրա, որ գտնվել են, իսկ որոշներն այն պատճառով, որ դրանք ոչ ոք այդպես էլ չի գտել:

1. Սինայան կոդեքսը

Աստվածաշնչյան ձեռագրերը հավաստի աղբյուր են, որոնցով կարելի է ստուգել, թե որքանով է ճիշտ Աստվածաշնչի ժամանակակից թարգմանությունը, որը մեր ձեռքին է: Աստվածաբանության գերմանացի պրոֆեսոր Կոնստանտին Տիշենդորֆը մի անգամ հասկացավ, որ իր ժամանակներում բոլոր հայտնի աստվածաշնչյան ձեռագրերը վերաբերում էին միջնադարյան դարաշրջանին: Ավելի հին աղբյուրներ գտնելու նպատակով նա 1844 թվականին ուղևորվեց Եգիպտոս՝ սուրբ Եկատերինայի վանք: Այդ վանքը գտնվում է Սինա լեռան վրա և ամենահինն է աշխարհում (կառուցվել է VI դարում): Այնտեղ պրոֆեսոր Տիշենդորֆը հայտնաբերեց Հին Կտակարանի առանձին գրքեր և Նոր Կտակարանի ամբողջական ժողովածու՝ գրված շատ հին մագաղաթի վրա: Անտիկ ձեռագիրն ուսումնասիրելիս գիտնականը պարզեց, որ Աստվածաշնչի այդ ձեռագիրը գրվել է մոտ 350 թվականին: Միաժամանակ պարզվեց, որ Աստվածաշունչն այն ժամանակներում ունեցել է միանգամայն նույն բովանդակությունը, ինչ և այսօր: Տիշենդորֆի գտած գանձը վկայում է այն մասին, որ Աստվածաշունչն անփոփոխ է բոլոր դարերում: Մինչ օրս գտնված Աստվածաշնչերից հնագույնը՝ Սինայան կոդեքսը տեսնելու համար այցելի՛ր **www.codexsinaiticus.org** համացանցային էջ:

2. Թութանհամոնի դամբարանը

Արդեն վաղուց հայտնի է, որ անտիկ ժամանակներում փարավոններին թաղում էին ոսկով, թանկարժեք իրերով և կենցաղային պարագաներով լի դամբարաններում: Սակայն 1922 թ. անգլիացի Գովարդ Քարթերը զարմանալի հայտնագործություն է արել Եգիպտոսի Թագավորների հովտում: Նա հայտնաբերել է Թութանհամոն փարավոնի դամբարանը: Ճարմանալի ոսկե սարկոֆագից բացի այնտեղ գտնվել են նաև այլ գանձեր. կահույք, արձաններ, զարդեր և շատ այլ ոսկե և արծաթե իրեր: Առանձնահատուկ հռչակ է ձեռք բերել Թութանհամոնի ոսկե գահը: Այդ գանձը դարձել է XX դարի ամենաարժեքավոր գտածոներից մեկը:

3. Պրիամի գանձը

Շատ անտիկ քաղաքներ անհետ վերացել են: Վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում հնագետները փորձում են գտնել դրանք: Նման գիտնականներից մեկը գերմանացի Հենրիխ Շլիմանն էր: 1873 թ. նա իրոք գտել է անհետացած անտիկ քաղաքներից մեկը՝ Տրոյան: Նույն թվականի մայիսին նա գտել է Տրոյայի լեգենդար թագավոր Պրիամի գանձը: Գանձերով լի արկղում հայտնաբերել էին ոսկի, սպասք և զարդեր: Այդ իրերի մեծ մասն այժմ գտնվում է Մոսկվայում (Ռուսաստան) և Բեռլինում (Գերմանիա): Այդ թանգարաններում կարելի է տեսնել, թե ինչպես են մարդիկ ապրել հազարավոր տարիներ առաջ:





4. Սաթե սենյակը

Շատ ասեկոսեներ են պտտվում ամբողջովին սաթով երեսպատված սենյակի մասին: Այն նվիրել էին արքա Պետրոս Ի-ին և գտնվում էր Եկատերինյան Մեծ պալատում՝ Ցարսկոյե Սելոյում (Սանկտ Պետերբուրգ): Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստները հանել և գողացել են սենյակի ողջ սաթը: Մինչ օրս գանձի գտնվելու վայրը հայտնի չէ: Բայց ինչպե՞ս կարող էր անհետանալ ամբողջ «սենյակը»: Նացիստները սաթե դեկորացիաներն ու պատերի մեծանկարները փաթեթավորել են տուփերի մեջ և դրանք տեղափոխել Քյոնիքսբերգի (այժմյան Կալինինգրադ) Թագավորական պալատ: Այնտեղից ծրագրված էր դրանք տեղափոխել Գերմանիայի խորքերը: Սակայն պատերազմից հետո Սաթե սենյակի գանձերով լի տուփերն այդպես էլ ոչ ոք չգտավ: Ոմանք ենթադրում են, թե այդ տուփերը թաքցրած են Ռուդնիե լեռներում՝ Գերմանիայի արևելքում: Մյուսները կարծում են, թե դրանք կորել են Լեհաստանում: Հստակ ասել չի կարելի: Շատերը մինչ օրս փորձում են լուծել այդ գանձի անհետացման հանելուկը: Ո՞վ գիտե, գուցե սաթե սենյակը ինչ-որ մի օր, այնուամենայնիվ, գտնվի:

5. Աստվածաշնչի գանձը

Իսկ դու գիտեի՞ր, որ Աստվածաշունչը ևս պատմում է գանձի մասին: Այնտեղ գրված է, որ այն աշխարհի ամբողջ ոսկուց ու բոլոր թանկարժեք քարերից ավելի թանկ է: Այդ գանձը չի կարող անհետանալ, փչանալ կամ հնանալ: Այն չեն կարող նաև գողանալ: Այդ գանձը հավիտենական է: Եվ այն կարող է գտնել յուրաքանչյուրը:

ԱՌԱՍՊԵԼ 4/21

տարեվերջյան համար · էջ 5

ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳԱՆՁԵՐ ՓՆՏՐԵԼՈՎ

Օլեսյա Իսահակ

Գուցե, դու սկզբում նույնիսկ ինձ չհավատաս, բայց Աստվածաշնչում իսկական գանձի շատ հուշումներ ու «քարտեզներ» կան: Ի՞նչ է դա: Եվ ինչպե՞ս գտնել այն: Բացի՛ր Աստվածաշունչը, վերցրու՛ գրիչն ու առաջ... Աստվածաշնչի գանձը փնտրելու:

Հիսուսը մարդկանց շատ էր պատմում այն մասին, ինչը կյանքում իրոք արժեքավոր է, իսկական գանձի մասին: Եվ Նա մեկ անգամ չէ, որ իր ունկնդիրներին ասել է, թե ինչպես կարելի է ձեռք բերել այդ գանձը: Ահա առաջին հուշումը:

Մատթեոսի Ավետարան, գլուխ 13, համար 44: Դու՛րս գրիր ներքևում, թե Հիսուսն ինչն է կոչում գանձ, և ինչպես կարող է մարդը ստանալ այն:

Մատթեոսի Ավետարանի 13-րդ գլխում կարդա՛ 45-րդ համարը: Այս առակում Հիսուսն ի՞նչն է անվանում մարգարիտ, և մարդն ինչպե՞ս ձեռք բերեց այն:



Ղուկասի Ավետարանի 12-րդ գլխում կարդա՛ 33 և 34 համարները: Հիսուսը խոսում է այն մասին, թե որտեղ մենք պետք է հավաքենք մեր գանձերը և ինչպես անենք դա: Ներքևում գրի՛ր, թե ինչ բացահայտեցիր:

Տիմոթեոսի Առաջին նամակի 6-րդ գլխում կարդա՛ 17-19 համարները: Մենք ինչի՞ն պետք է հուսանք: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր հարստությունը: Մենք ի՞նչ կստանանք, եթե հավաքենք այն գանձերը, որոնց մասին ասում են այս համարները:

Մատթեոսի Ավետարանի 6-րդ գլխում կարդա՛ 19-21 համարները: Գանձերին ի՞նչ կարող է պատահել երկրի վրա: Իսկ երկնային գանձերի՞ն: Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ է նշանակում այս համարը:

Էմ. Յուվիդիկիկիդոմ, Ղրիմ

Շարունակի՛ր կարդալ, որպեսզի իմանաս հարցի ճիշտ պատասխանը...

ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Վալդեմար Ցորն

Հիսուս Քրիստոսին միշտ շրջապատում էին մարդիկ: Շատ հազվադեպ էր Նրան հաջողվում մենակ մնալ Իր աշակերտների հետ: Երբեմն Նա գիշերը բոլորից հեռանում էր ու բարձրանում լեռը, որպեսզի մենակ մնար Աստծո` Իր Հոր հետ: Այնտեղ նա հոգեպես հանգստանում էր, ուժ էր հավաքում, քաջալերանք ու ոգեշնչում էր ստանում հետագա ծառայության համար:

Իսկ հետո նորից մարդիկ, մարդիկ, մարդիկ... Ինչպե՞ս նրանց պատմել կյանքում ամենագլխավորի մասին, որ բոլորին հասկանալի լինի: Ինչպե՞ս նրանց բացատրել, որ երկրային կյանքը ամբողջը չէ, որ կա նաև այլ աշխարհ: Աշխարհ, որտեղ կան հրեշտակներ, որտեղ ամեն բան սուրբ է ու չարություն չկա, որտեղ բնակվում է Աստված:

Հիսուսը եկել էր, որպեսզի այդ աշխարհը հասանելի դառնար մարդկանց համար: Ինչպե՞ս հայտնվել այդ աշխարհում և ինչի՞ է այն նման: Հիսուսը պատմում էր դրա մասին` կյանքից օրինակներ բերելով: Մենք դրանք գիտենք որպես Նրա առակներ: Ահա դրանցից մեկը:

Լինում է, չի լինում, մի վաճառական է լինում: Հնում սուպերմարկետներ և խանութներ չկային, հնարավոր չէր ինչ-որ բան գնել համացանցով: Սակայն կային վաճառականները. մարդիկ, որոնք գնում էին այլ քաղաքներ կամ նույնիսկ երկրներ, տուն էին բերում ապրանքներ, դրանք վաճառում շուկայում և, շահույթ ստանալով, նորից գնում էին ինչ-որ տեղ` ապրանք բերելու: Ոմանք գործվածք էին վաճառում, մյուսները` ոչխար, երրորդները` հացահատիկ կամ ձիթայուղ: Կային նաև վաճառականներ, որոնք

Ի՞նչ ես կարծում.

1. Ինչու՞ էր Հիսուսն առակներ պատմում:
2. Մենք կարո՞ղ ենք մուտքի իրավունք ստանալ Աստծո Թագավորություն:
3. Մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի վստահ լինենք, որ հավիտենական կյանք ունենք:

զբաղվում էին թանկարժեք իրերի առևտրով. ոսկե և արծաթե զարդերի կամ մարգարիտի:

Մարգարիտը սադափե գնդիկ է, որը մեղմ շողշողում է: Այն ժամանակներում դա շատ թանկ արժեր: Ուրեմն, կար մի վաճառական, որը զբաղվում էր մարգարիտների առևտրով: Սակայն նա երազում էր գտնել այնպիսի մարգարիտ, որը կգերազանցեր բոլոր մյուսներին իր գեղեցկությամբ և արժեքով: Եվ ահա, մի անգամ այդ վաճառականը գտավ այդպիսի մարգարտահատիկ: Բայց պարզվեց, որ այն այնքան թանկ արժեր, որ վաճառականը չկարողացավ գնել: Այդ ժամանակ վաճառականը գնաց տուն, վաճառեց ամենն, ինչ ուներ, վերադարձավ և ամեն դեպքում գնեց այդ թանկարժեք մարգարտահատիկը: Նրա ուրախությանը չափ չկար: Վերջապես նրա երազանքն իրականացել էր:

Այս օրինակով Հիսուսը ցույց տվեց, որ մարդու կյանքում չկա ավելի կարևոր բան, քան ստանալ հավիտենական կյանքը` Երկնքի Թագավորությունը: Այն ստանալու համար դու պետք է Հիսուս Քրիստոսին ընդունես քո սրտում, ապաշխարես մեղքերից և կյանքդ նվիրես Նրան: Հիսուս Քրիստոսի հետ շփումը պետք է քեզ համար դառնա կյանքում ամենակարևորը:

Թանկարժեք մարգարտահատիկի մասին պատմությունը գրված է Մատթեոսի Ավետարանի 13-րդ գլխի 45-46 համարներում:

Նկ. Լարիսա Գորոշկո

ԵՐԿԻՆՔԸ ԻՐԱԿԱՆ ԳԱՆՁ Է

Վալդեմար Ցորն

Որոշ մարդիկ ասում են, որ ամենագլխավորն առողջություն, հաջողություն, հարստություն ունենալն է: Նրանք միշտ երջանկություն են փնտրում: Նրանք կարծում են, թե երջանիկ լինելու համար հարկավոր է ուժեղ ու հաջողակ լինել: Շատերը կարծում են, թե երջանկությունը շատ գումար ունենալն ու սրտի ուզածը գնելն է:

Բայց մի՞թե իրոք այդպես է: Ես գիտեմ, թե Ում կարելի է հարցնել: Նա ամեն ինչ գիտի: Նա գիտի մեր բոլոր հարցերի պատասխանները: Նա տեսնում է մեր բոլոր ցանկություններն ու օգնում է ճիշտ որոշումներ կայացնել: Կարծում եմ՝ դու արդեն կռահեցիր, թե ես Ում նկատի ունեմ: Այո, Նա Հիսուս Քրիստոսն է:

Գիտե՞ս, թե Նա ինչ է ասում այդ մասին: Բացենք Աստվածաշունչը (հենց այստեղ են գրված Հիսուսի խոսքերը) և գտնենք, թե Նա ինչ է ասում իրական գանձի մասին, ինչ է ասում երջանկության մասին: Աստվածաշնչում այն կոչվում է երանություն:

Նրա խոսքերը գրված են Մատթեոսի Ավետարանի վեցերորդ գլխում. ***«Ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգը փչացնում են, և գողերը պատը ծակելով՝ գողանում են, այլ ձեզ համար գանձեր դիզեցեք երկնքում, ուր ո՛չ ցեցը, ո՛չ էլ ժանգը կարող են փչացնել, և ո՛չ էլ գողերը կարող են պատը ծակել ու գողանալ, որովհետև, որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի»:***

Ի՞նչ է դա նշանակում: Հիսուսն ասում է. մեզ համար ամենագլխավորը ոչ թե այն է, ինչ ունենք այստեղ՝ երկրի վրա, այլ այն, ինչ ունենք երկնքում: Այսինքն՝ մեր իրական գանձը մեղքերի ներումն է, որ մենք ստացել ենք ապաշխարելիս և փրկությունը, որ տվել է մեզ Տերը, երբ մենք ընդունել ենք Իրեն որպես Տեր և Աստված: Նաև շփումն Իր հետ, երբ մենք դիմում ենք Իրեն աղոթքով և լսում Իրեն, երբ կարդում ենք Աստվածաշունչը: Այս ամենը շատ ավելի կարևոր են, քան հարստությունը, փառքն ու առողջությունը: Սա է իրական երջանկությունը:

Հիսուսն ասել է. ***«Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք պիտի տեսնեն Աստծուն: Երանի՜ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն: Երանի՜ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի թագավորությունը»*** (Մատթ. 5): Այլ կերպ ասած՝ Նա ասում է. «Դուք երջանիկ եք, քանի որ ձեր մեղքերը ներված են, և դուք այժմ Աստծո զավակներն եք: Եվ կգա ժամանակը, երբ դուք ձեր աչքով կտեսնեք երկինքն ու երկիրն արարած Աստծուն: Եթե ձեզ անպատվում են նրա համար, որ դուք հավատացյալ եք, դուք երջանիկ եք, չէ՞ որ հավիտյան ձեզ է պատկանում Երկնքի թագավորությունը: Իսկ դա ամենագլխավոր, աշխարհում ոչնչի հետ չհամեմատվող հարստություն է՝ երկնքի գանձը»:

«ՈՐՈՎՀԵՏԵՎ, ՈՐՏԵՂ ՈՐ ՁԵՐ ԳԱՆՁՆ Է, ԱՅՆՏԵՂ ԷԼ ՁԵՐ ՍԻՐՏԸ ԿԼԻՆԻ»

ՄԱՏԹԵՈՍ 6.21

Նկ. Ալեքսանդրա Միկուսիչ

ԳՏԱԾՈՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Օլեսյա Իսահակ

Արձակուրդների առաջին օրը Վահեն սովորականից շուտ արթնացավ: Անկողնում պառկել այլևս չէր կարողանում: Ծնողները դեռ քնած էին: Այդ պատճառով, փորձելով ինչ-որ բանով զբաղվել, Վահեն որոշեց ծնողների համար նախաճաշ պատրաստել: Բաժակները, ափսեները, կաթը, մյուսլին, հացը, կարագը... Մի քանի րոպեից ծնողների սենյակի դուռը բացվեց, և խոհանոց մտավ հայրիկը:

– Այդ ինչու՞ քնած չես: Մենք էլ մտածեցինք, թե հարևանի կատուն է խոհանոցում իրարանցում առաջացրել:

Վահեի դեմքին ժպիտ հայտնվեց.

– Նախաճաշը պատրա՞ստ է:

– Ապրե՛ս: Նշանակում է՝ մեզ համար նախաճաշ ես պատրաստելու նաև ողջ հաջորդ շաբաթվա ընթացքում, – ասաց հայրը:

Տղան տարակուսանքով նայեց հայրիկին:

– Բայց շիլա եփելու համար ամեն առավոտ ստիպված ես լինելու խարույկ վառել...

– Մենք գնում ենք արշա՞վ... – հիացմունքով բացականչեց Վահեն:

– Այո, և նախաճաշի պատասխանատուն դու ես, – տեղեկացրեց հայրը:

Եվ ահա, մեկ շաբաթ անց հայր ու որդի քայլում էին անտառի նեղ արահետով: Նրանց շուրջը վեր էին խոյանում հսկայական ծառեր, որոնք ամենուր տարածել էին իրենց լայն ճյուղերը: Ամեն քայլափոխի հանդիպում էին սկյուռիկներ և նապաստակներ: Իսկ մի անգամ Վահեն նույնիսկ եղնիկ տեսավ:

Ճամփորդները քայլում էին արդեն մի քանի ժամ և վերջապես անտառից դուրս եկան մի լայնարձակ բացատ, որի եզրին զառիթափ կար: Եզրին մոտենալով՝ նրանք նայեցին ներքև. այնտեղ՝ իրենցից մի քանի մետր հեռավորության վրա, աղմկում էր գետը: Ի՜նչ զարմանալի տեղ էր:

– Ես կսկսեմ վրան խփել, իսկ դու ցա՛խ հավաքիր խարույկի համար, – կարգադրեց հայրիկը:

Վահեն նորից անտառ մտավ: Նա արդեն վաղուց էր սովորել տարբերել, թե որ ճյուղերն են ավելի համապատասխան խարույկի համար: Բարակները լավ են կրակը կպցնելու համար, իսկ չոր ու հաստ ճյուղերը՝ կրակը պահելու համար: Մի ամբողջ գրկաչափ ցախ հավաքելով՝ Վահեն արդեն ուզում էր վերադառնալ, երբ հանկարծ նկատեց, որ խոտերի մեջ ինչ-որ բան է փայլփլում: Կռանալով՝ տղան վերցրեց այն: Դա կողմնացույց էր: Հին ու փչացած կողմնացույց: Ապակին ճաքած էր, իսկ կափարիչը՝ ժանգոտված: Կողմնացույցի հակառակ կողմում Վահեն կարդաց փորագրված բառերը. «Եվ գանձ կունենաս...»: Վերջին բառը հնարավոր չէր կարդալ, այն ծածկված էր ժանգով:

Գտածոյով հիացած՝ Վահեն վերադարձավ հայրիկի մոտ.

– Պապա՜, չես հավատա, թե ի՜նչ եմ գտել: Գա՜նձ:

– Հապա տուր նայեմ, – հայրիկը ձեռքն առավ կողմնացույցը, – ա՜յ քեզ գտածո... Վրան փորագրություն էլ կա. «Եվ գանձ կունենաս...»

Նա մի պահ մտածեց:

– Այո, տեսնո՞ւմ ես: Սա իսկական գանձ է: Այդպես էլ գրված է:

– Իսկ ես գիտեմ, թե ինչպես է վերջանում նախադասությունը: Այնտեղ գրված է, թե որտեղ կարելի է գտնել իսկական գանձը:

– Պատմի՜ր:

– Արի նախ խարույկ վառենք և ընթրիք պատրաստենք:

Կես ժամ անց հայր ու որդի կրակի մոտ նստած էին: Կաթսայի մեջ եփվում էր համեղ ապուրը, իսկ ինքնաշեն շամփուրի վրա խորովվում էին երշիկները:

– Վահե՛, նայի՛ր կողմնացույցին, վրան գրված բառերին:

Տղան ձեռքն առավ թանկագին գտածոն և նորից կարդաց փորագրված բառերը:

– Գիտե՞ս, թե որտեղից են այդ խոսքերը:

Վահեն հարցական նայեց հորը:

– Աստվածաշնչից:

– Չէ հա՜: Իրո՞ք:

– Եվ այդ խոսքերն ասել է անձամբ Հիսուսը: Նայի՛ր երկնքին, որդի՛ս…
Շունչը պահելով՝ Վահեն նայեց վերև: Այնտեղ տեսածից շունչն ասես կտրվեց: Մուգ, գրեթե սև երկինքը ծածկված էր բյուրավոր աստղերով, իսկ դրանց մեջ շողում էր բարակ նորալուսինը:
– Հիսուսը մի անգամ ասել է, – լռությունը խախտեց հայրը, – որ ով հետևի Իրեն, հավատա նրան, ինչ Ինքն ասում է, և կատարի այն, ինչ Ինքը պատվիրել է, անպայման կստանա իսկական գանձ… երկնքում: Այն ավելին է այն ամենից, ինչ կա այս երկրի վրա: Նույնիսկ այս գիշերային երկնքից ավելի հրաշալի:
Հայր ու որդի լուռ նայում էին վերև:
– Հայրի՛կ, – շշնջաց Վահեն, – ես էլ եմ ուզում այդ գանձը…
– Ուրեմն խնդրի՛ր Հիսուսին, որ մտնի քո սիրտը, «Եվ գանձ կունենաս երկնքում»…
Վահեն փակեց աչքերը: Շուրջը լռություն էր տիրում: Միայն գետն էր շարունակում իր քչքչոցը և ածուխն էր ճրթճրթում, իսկ տղան խարույկի մոտ կամացուկ աղոթք էր շշնջում:

Երկու շաբաթ անց Վահեն իրենց տուն հրավիրեց իր ընկեր Կարենին: Տղաներին թույլ տվեցին վրան խփել տան հետևի այգում և գիշերել այնտեղ: Քնելուց առաջ տղաները ձեռքի լապտերիկներով նայում էին քարտեզը: Վահեն ընկերոջը ցույց էր տալիս այն ճանապարհը, որ ինքն անցել էր հայրիկի հետ:
– Իսկ ի՞նչ է նշանակում այս մեծ խաչը քարտեզի վրա:
– Այդտեղ ես իսկական գանձ եմ գտել:
– Հա՞, այդ կողմնացու՞յցը, – հարցրեց Կարենը, որն արդեն ինչ-որ բան գիտեր նրանց արշավի մասին:
Վահեն խորհրդավոր ժպտաց.
– Արի ու տես, որ ոչ: Կողմնացույցի վրա միայն հուշումն էր գրված, թե որտեղ կարող եմ գտնել գանձը…
– Պատմի՛ր, – անհամբերությամբ բացականչեց Կարենը:
– Արի՛ իմ հետևից, – Վահեն դուրս եկավ վրանից:
Տղաները դուրս եկան և նստեցին խոտերին: Վահեն շշնջաց…
– Նայիր երկնքին…

Նկ. Մարյամ Միկիրտիչյան

ՀԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՇՈՎՈՒՄ

ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Խաղաքարերը (կարող ես օգտագործել ցանկացած փոքր իր) դի՛ր «Ստարտ»-ի վրա:
2. Գցի՛ր խաղային զառը և արա՛ այնքան քայլ, որքան այն ցույց կտա:
3. Եթե ընկել ես կանաչ կամ կարմիր թվի վրա, ապա կատարի՛ր հանձնարարությունը:
4. Հաղթում է այն մասնակիցը, որն առաջինն է հասել վերջնակետին:



Նկ. Յակով Բոլորսա

ԳԱՆՁԸ ԼՃԻ ՄՈՏ

Սվետլանա Գույչենկո

Արմենը երազում էր գտնել: Նա շատ էր կարդացել դրանց մասին ու հաճախ էր իրեն գանձ որոնող պատկերացրել: Մի ամառային օր արթնացավ վաղ առավոտյան և որոշեց որոնումները սկսել հենց այդ օրը:

վազեց մոտ և հավաքեց ընկերոջ՝ Նարեկի համարը:

– Բարև, :

– Բարի օր :

– Ես ուզում եմ զբաղվել որոնելով:

– Ի՞նչ լավ է: Կարո՞ղ եմ միանալ քեզ:

– Դե իհարկե: Արի՛ մեր տուն: Պետք է շտապ նկարել:

Քսան րոպե անց և նստած էին մոտ և փորձում էին նկարել:

– Ես հիշում եմ, մի հաղորդման ժամանակ ասում էին, որ լինում են հատակին, – ասաց :

– Ո՞ր

թռթվեց ուսերը.

– Չգիտեմ: Գուցե, կան բոլոր : հետևում մենք մեկն ունենք: Ստուգե՞նք:

– Լավ միտք է, – լայն ժպտաց :

Բայց ամեն դեպքում պետք էր: Ի՞նչ արկածներ առանց դրա:

– , արի մեր խումբ հրավիրենք Տիգրանին: Նա լավ է նկարում:

– Ո՛չ: Դու մոռացե՞լ ես, որ անցած ամառ մենք նրա հետ վիճել ենք: Ես խոսք եմ տվել այլևս նրա հետ չխոսել:

– Ափսո՜ս, նա մեզ հիմա այնքա՜ն կօգներ:

Հաջորդ հինգ րոպեն և լուռ նստած նայում էին իրենց դիմաց դրված մաքուր : Նրանցից ոչ մեկը չէր կարող գեղեցիկ նկարել: Չէ՞ որ դա է: Ամեն բան պետք է հստակ ու հասկանալի լինի:

– Լավ, – համաձայնեց –, զանգի՛ր : Ես դա անում եմ հանուն :

, որ ապրում էր հարևան , ուրախությամբ օգնության վազեց և : ճաշին պատրաստ էր, և և ուղևորվեցին դեպի : Բայց հանկարծ կանգ առավ.

– , դու ունե՞ս հանելու համար:

– Ոչ, բայց ես գիտեմ, թե ով ունի. Լևոնը:

գլուխը կախեց: հետ նա նույնպես ընկերություն չէր անում: նրան չէր կարողանում ներել հին վիրավորանքը: Բայց գործի համար...

– Լա՛վ, կանչեք :

Եվ այսպես, և մոտեցան : Նրանք բացեցին և սկսեցին մտածել, թե որտեղ պետք է սուզվել: դրեց վրա:

– Կսուզվենք այստեղ:

և համաձայնությամբ գլխով արեցին:

– Ո՞վ կլողա առաջինը, – հարցրեց :

– Ես լողալ չգիտեմ... – խոստովանեց :

– Ես էլ... – ասաց :

– Ես նույնպես... – տխուր հոգոց հանեց :

շփոթված նայեց ընկերներին.

– Ես էլ լողալ չգիտեմ: – Նման բան ոչ ոք չէր սպասում:

Տղաներն այնքա՜ն մոտ էին նպատակին: նկարած էր, ամուր կար, բայց ամենագլխավորը նրանք չէին կարող անել:

– Գոռը գիտի: Նա կօգնի մեզ, – բացականչեց :

գլխով արեց, թեև նրա հետ էլ ընկերություն չէր անում: Ոչինչ, հանուն կարելի է դիմանալ:

Մի քանի րոպեից մոտ վազեցին : ուրախ էր տղաներին օգնել նման գործի համար: Իրար գրկելով՝ և իրար վրա դրեցին , շրջան կազմեցին և բարձր բղավեցին: Դրանից հետո գնաց : Նա մի քանի անգամ սուզվեց, բայց այդպես էլ ոչինչ չգտավ:

Սկսում էր մթնել: , , տխուր նստել էին ափին և նայում էին, թե ինչպես է դուրս գալիս :

– Կներեք, բայց ես ոչինչ չգտա, բացի , և , – ասաց նա:

գլուխը կախեց: Նրա համար տխուր ու ցավալի էր: Ի՞նչ անել հետո: Եվ հանկարծ ասաց.

– Իսկ դուք հիշու՞մ եք, թե երկու տարի առաջ մենք այստեղ ինչպես էինք մեծ կառուցում:

– Այո՛, այն ժամանակ մենք բոլորս դեռ ընկերներ էինք, – տխուր ասաց , եկեք հաշտվենք ու նորից ընկերություն անենք:

և ուրախությամբ համաձայնեցին:

Այդ պահին շատ կարևոր մի բան հասկացավ. թեև ինքն այդ օրը չգտավ, բայց վերագտավ ամենաարժեքավորը՝ ընկերներին:

Նկ. Կատրինա Ֆիլիպովա

ԲԻՆԳՈ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐԻ

Երկնքում գանձեր դիզելու մի քանի գաղափար: Նշի՛ր այն գործերը, որոնք դու արդեն արել ես: Այս գործերից մի քանիսը կարող ես դարձնել մշտական կանոն:

Դրա համար դու ամբողջ մի արձակուրդ ունես: Առա՞ջ:

Խնդրի՛ր Հիսուսին մտնել քո կյանք (ամենակարևորը):	Խաղահրապարակում երեխաներին խնձորնե՛ր բաժանիր:	Զանգահարի՛ր պապիկին ու տատիկին և հարցրու՛, թե ինչպես են:	Փոստատարին առաջարկի՛ր մի բաժակ ջուր:	Մայրիկին օգնի՛ր ճաշ պատրաստել:
Հարևաններին բարի խոսքե՛ր ասա:	Մայրիկից թույլտվությու՛ն խնդրիր և ջրի՛ր տան ծաղիկները	Օգնի՛ր եղբորդ/քրոջդ կամ ընկերոջդ՝ հասկանալ դպրոցի դասը, որը նա չի հասկանում:	Ուսուցչուհուդ շնորհակալական բացի՛կ գրիր և հանձնի՛ր առաջին իսկ հանդիպմանը:	Ծնողներիդ համար նախաճա՛շ պատրաստիր:
Ժպտա՛ և բարևի՛ր բոլորին, ում այսօր կտեսնես:	Քո սիրելի խաղալիքներից մեկը նվիրի՛ր մանկատանը կամ ձեր եկեղեցու երեխաներից մեկին:	Ինքդ մտածի՛ր մի բարի գործ:	Ծնողներիդ, եղբորդ, քրոջդ կամ ընկերոջդ հետ հավաքե՛ք այգու կամ խաղահրապարակի աղբը:	Փողոցում մի փոքրիկի նվիրի՛ր «Արահետ» ամսագիր:
Տարեց հարևանուհուդ հարցրու՛, թե ինչով կարող ես նրան օգնել այսօր:	Մի մտերիմ ընտանիքի առաջարկի՛ր խաղալ իրենց փոքրիկի հետ, մինչ իրենք զբաղված են իրենց գործերով:	Ոչ հավատացյալ ընկերոջդ պատմի՛ր իրական գանձի մասին:	Մեծերից մեկի հետ թխվածքաբլի՛թ թխիր և բաժանի՛ր թաղամասի անտուններին:	Առավոտյան աշխատանքից առաջ հայրիկի համար պատրաստի՛ր թեյ կամ սուրճ:
Հանի՛ր սպիտակեղենը լվացքի մեքենայից և կոկիկ փռի՛ր չորանոցին:	Ինչ-որ մեկի համար խանութում պահի՛ր բաց դուռը:	Մաքրի՛ր ընտանիքիդ բոլոր անդամների կոշիկները:	Ամբողջ շաբաթ օգնի՛ր մայրիկին՝ սեղան գցելիս:	Քնելուց առաջ մանկական Աստվածաշունչ կարդա փոքրիկ քրոջդ կամ եղբորդ համար (կամ ինքդ ընթերցիր):

Նկ. Էլենա Գավրիլչչուկ

Ձեռքի աշխատանք

ԳԱՆՁԵՐԻ ՔԱՐՏԵԶ

Աշխատանքը սկսելուց առաջ ծնողներիդ կամ մեծերից որևէ մեկին խնդրի՛ր, որ օգնեն քեզ:

Քեզ հարկավոր է.

- Մեկ մեծ (հայրիկ, մայրիկ)
- Թուղթ
- Սուրճ կամ թեյ
- Ֆլոմաստերներ կամ գունավոր մատիտներ
- Ժապավեն
- Ջեռոց

Ինչպե՞ս պատրաստել

1. Մի քիչ սու՛րճ եփիր կամ թունդ սև թե՛յ թրմիր:
2. Ճմրթի՛ր թուղթը:
3. Թուղթը դի՛ր կաթսայի մեջ և այնտեղ լցրու՛ սուրճը կամ թեյը:

4. Հետագա աշխատանքի համար քեզ հարկավոր կլինի ծնողներիդ օգնությունը: Թուղթը փռի՛ր տապակի մեջ և դի՛ր ջեռոցը: Ապա միացրու՛ ջեռոցը 200 աստիճան: 10 րոպե անց թուղթը հարկավոր է շրջել: Մի՛ փորձիր դա ինքնուրույն անել: Թող քեզ օգնեն ծնողներդ: Եվս 5 րոպե անց հանե՛ք տապակն ու թողեք, սառչի:
5. Այդ թղթի վրա նկարի՛ր դեպի գանձեր տանող ուղին: Նկարազարդի՛ր այն (կղզի, արմավենիներ և նավ):



6. Փաթաթի՛ր քարտեզը թղթագլանի նման և կապի՛ր այն ժապավենով: Դու կարող ես նաև կնքել այն պլաստիլինե «զմուռսով»:

ՊԱՏՐԱՍՏ Է

ՄԻԱՆ ԵՎ ՊՈՆԻԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԵՊՔԸ

Կատյա Խաբիխտ

Միան շնչակտուր վազեց պոնիների ֆերմա: «Այսօր ես Բմբուլիկին եմ վարելու», – մտածեց նա: Բմբուլիկը Միայի ամենասիրելի պոնին էր: Նա արագ հագավ ձիավարության ճտքակոշիկները և կոշիկները թողեց ձիանոցի մուտքի մոտ: Այնտեղ արդեն մի զույգ կոշիկ կար: «Վիոլայի կոշիկները ճիշտ իմ կոշիկների նման են», – նկատեց Միան և վազեց դեպի մսուրները:

Դրանցից երկրորդը Բմբուլիկինն էր, բայց այն դատարկ էր:

– Որտե՞ղ է Բմբուլիկը, – բղավեց Միան, – ես այսօր ուզում եմ նրան հեծնել:

Ֆերմայում աշխատող Քրիստոֆը երևաց անկյունից.

– Բարև, Միա՛: Ինչու՞ ես այդպես բղավում: Այսօր Վիոլան է վարում Բմբուլիկին: Հաջորդ անգամ ժամանակին արի և հնարավորություն կունենաս ընտրելու, թե որ պոնիով ես ուզում զբոսնել: Այսօր դու Բալուին ես վարելու:

– Վիոլա՞ն..., – ծամածռվեց Միան, – աստվածաշնչյան համարներն անգիր ասող այդ գերազանցիկը վարում է իմ Բմբուլիկի՞ն: Դեռ կտեսնե՞նք..., – կամաց ասաց նա և քայլերն ուղղեց դեպի այն վայրը, որտեղ մաքրում էին պոնիներին:

Վիոլան խնամքով սանրում էր Բմբուլիկի փայլուն մազերը: Նրանց մոտենալով՝ Միան ձեռքերը կանթեց և անբարյացակամորեն դիմեց Վիոլային.

– Ի գիտություն քեզ՝ այսօր Բմբուլիկին ես եմ վարում:

Վիոլան թափ տվեց խոզանակը:

– Հանգստացի՛ր, – պատասխանեց աղջնակը, – Քրիստոֆն ասաց, որ այսօր կարող եմ ես վարել Բմբուլիկին: Դու դա կարող ես անել մյուս անգամ:

Միան ոտքերը խփեց գետնին:

– Չէ՜, ես այսօր եմ ուզում: Հիմա՜, – բղավում էր դժգոհ աղջիկը:

Պոնին սկսեց անհանգիստ դոփել տեղում: Մսուրից դուրս եկավ Քրիստոֆը:

– Ի՞նչ է պատահել: Միա՛, վե՛րջ տուր բղավոցիդ: Այլապես այսօր ընդհանրապես չես ձիավարի:

– Լավ, – դժգոհ փնթփնթաց Միան: Սակայն բավական էր, Քրիստոֆը չերևաց, որ նա շարուակեր.

– Վիոլա՛, դու միշտ քո Հիսուսի մասին ես խոսում: Որ Նա միշտ բարիք է գործում մյուսների համար: Ինքդ էլ մի բարի բա՛ն արա. ի՛նձ տուր Բմբուլիկին:

Վիոլան սկսեց բարկանալ.

– Դու քեզ այնքան վատ ես պահում, որ ես չեմ ուզում քեզ հետ գործ ունենալ: Հանգի՛ստ թող ինձ:

– Զզվելի՜, – ի պատասխան բղավեց նրան Միան:

Նա լացակումած վազեց դեպի մսուրները: Միան բոլորովին չէր ուզում գնալ Բալուի մոտ, մաքրել նրան, առավել ևս՝ ցանկություն չուներ նրան վարելու:

Մոտենալով Բալուի մսուրին՝ Միան հատակին թարմ գոմաղբ տեսավ: Քիթը ձեռքով փակելով՝ նա բարկացած բղավեց.

– Ա՜յս էր պակաս: Հիմա էլ պիտի նրա հետևից հավաքեմ: Հը՜մ, իսկ ես գիտեմ, թե ուր դնեմ սա:

Գոգաթիակով վերցնելով ձիու թարմ թրիքը՝ նա իրենից հեռու պահելով տարավ Վիոլայի կոշիկների մոտ:

– Սա քեզ նրա համար, որ այսօր Բմբուլիկին ես հեծնել, – չարախնդալով ասաց Միան և գոմաղբի գնդիկը մտցրեց կոշիկների մեջ: Հետո, ասես ոչինչ չէր էլ պատահել, վերադարձավ մսուր:

– Ֆու՜, ի՞նչ զզվելի է, – ծամածռվում էր Միան՝ չոր խոտով գոգաթիակը մաքրելով:

Նա Բալուին հանեց մսուրից և տարավ մաքրելու: Երբ Միան կատարեց հանձնարարությունը, Քրիստոֆը նրան օգնեց՝ նստել պոնիի վրա: Բալուն հանգիստ կանգնած էր, մինչ աղջիկը նստում էր թամբին:

– Լա՜վ պոնի ես, – ասում էր Քրիստոֆը՝ շոյելով կենդանուն:

– Առա՜ջ, – հրահանգեց նա, հետևելով, որ աղջիկները ուղիղ նստեն թամբին և ճիշտ բռնեն սանձերը, – վարժություններից հետո կարող եք ազատ ձիավարել, համաձա՞յն եք:

– Այո, այո... – դժգոհ պատասխանեց Միան:

Նա, միևնույն է,Բալուին վարել չէր ուզում:

– Ես ուզում եմ քառասմբակ վազք անել, – բացականչեց Վիոլան:

Անշտապ մոտենալով Միային՝ նա լեզու հանեց:

– Բմբուլիկը քառասմբակ ամենից լավ է վազում:

Միայի տրամադրությունն ավելի փչացավ: Նա տուն էր ուզում: Սարսափելի օր էր:

Քրիստոֆը հրահանգ տվեց, և պոնիները շրջանաձև վազեցին: Չցանկանալով ինքն իրեն խոստովանել՝ Միան ամեն դեպքում վայելում էր ձիավարությունը: Ի վերջո, Բալուն շատ լավ պոնի է: «Եվ ամեն դեպքում, իմ սիրելին Բմբուլիկն է», – շշնջաց աղջնակն այնպես, որ Բալուն չլսեր իրեն:

– Հրաշալի՜ է, Բմբուլի՛կ: Հրաշալի՜ է, Բալու՛, – գովեց նրանց Քրիստոֆը, – իսկ հիմա վազքով... Վիոլա՛, ուղղվի՛ր, խնդրում եմ, և ձեռքերդ հանգի՛ստ պահիր: Այո՛, այդպես ավելի լավ է:

«Ինչ-որ Վիոլան այսօր վատ է ձիավարում, – մտածեց Միան և ուշադիր նայեց, – մի՞թե նա արցունքները մաքրեց»:

– Վիոլա՛, սանձը հանգի՛ստ պահիր, – գոռաց նրան Քրիստոֆը, – հավաքի՛ր քեզ:

Միային փոքր-ինչ հաճելի է, որ Վիոլան լալիս է: Բայց ինչու՞ է նա այդքան տխուր:

– Բը՜ռ, ստո՜պ, – բացականչեց Քրիստոֆը, – ազատ ժամանակ: Ի՞նչ եք ուզում: Վիոլա՛, դու ես սկսում:

Վիոլան կծեց ներքևի շրթունքն, ապա ասաց.

– Ես կցանկանայի Միայի հետ փոխել պոնիները, որ նա վարի Բմբուլիկին:

Լռություն տիրեց:

– Դե լավ, – պատասխանեց Քրիստոֆը, – մեզ մոտ դեռ նման բան չի եղել, բայց ինչու՞ ոչ: Միա՛, դու դա ես ուզում չէ՞:

– Ը՜մ... Դե հա, իհարկե, – զարմացած պատասխանեց աղջիկը:

Քրիստոֆն աղջիկներին օգնեց իջնել ձիերից:

Երբ Միան գնում էր դեպի Բմբուլիկը, Վիոլան բռնեց նրա թևքը.

– Միա, ես... ես կցանկանայի ներողություն խնդրել:

– Ինչու՞, – զարմացավ Միան:

Վիոլան լացակումած նայեց նրան:

– Ես քեզ լեզու հանեցի և ասացի, որ Բմբուլիկը քառատրոփ բոլորից արագ է վազում: Ես դա

արեցի քեզ բար-
կացնելու համար:
Եվ հիմա ամաչում եմ: Ես
իրոք ուզում եմ անել միայն այն, ինչ հաճելի է
Տեր Հիսուսին: Բայց երբեմն չի ստացվում:

Միան Վիոլային էր նայում զարմանքից լայն բացած աչքերով: Նման բան նա չէր սպասում: Որովհետև Վիոլան ընդհանրապես մեղավոր չէր, Քրիստոֆն էր նրան թույլ տվել Բմբուլիկին վարել:

– Դե լավ է, որ դու ներողություն խնդրեցիր, – հիշելով, թե ինքն ինչ վատ վարվեց Վիոլայի հանդեպ, ասաց Միան, – և... ինչ վերաբերում է նրան, ինչ ես ասացի քո Հիսուսի մասին, դա հիմարություն էր... Եվ ների՛ր, որ բղավեցի քեզ վրա:

Քրիստոֆն աչքով արեց աղջիկներին.

– Նման զբաղմունքն ինձ շատ ավելի է դուր գալիս: Եթե ձեզ այդքան դուր է գալիս Բմբուլիկը, գուցե, հերթո՞վ վարեք նրան: Ի՞նչ եք կարծում:

Միան և Վիոլան գոհունակ գլխով արեցին:

Ձիավարության դասն ամեն դեպքում լավ անցավ: Միան ցանկացավ քառատրոփ վարել: Քրիստոֆը թույլ տվեց: Աղջնակի համար հիմա դա կրկնակի հաճելի էր, որովհետև նա հեծնել էր Բմբուլիկին:

Պարապմունքի վերջում աղջիկները պոնիներին տարան մաքրելու: Ձիուկներին արդեն սպասում էին դասի եկած մյուս երեխաները: Աղջիկները միմյանց օգնեցին հանել ճտքավոր կոշիկները և դրանք կոկիկ դրեցին մսուրի դռների մոտ: Գոհունակ սուլելով՝ Միան ոտքը մտցրեց կոշիկի մեջ:

– Ֆու՜... Բե՜..., – նա սարսափահար դեն նետեց կոշիկը, – այս ի՜նչ էր:

Եվ իսկույն հիշեց, որ Վիոլայի կոշիկների մեջ ձիու գոմաղբ էր լցրել: Բայց պարզվեց, որ դրանք ոչ թե Վիոլայի կոշիկներն էին, այլ հենց իրենը:

Վիոլան բացականչեց.

– Ի՜նչ զզվելի է: Այդ ո՞վ է արել:

– Այդ ես էի..., – լացը մի կերպ զսպելով՝ շշնջաց Միան:

– Դու քո կոշիկների մեջ ես լցրել այդ գարշելի գոմա՞ղբը, – նորից հարցրեց Վիոլան՝ չհավատալով ականջներին:

Միան ֆսֆսացրեց քիթը.

– Չէ՛: Ճիշտն ասած՝ ես ուզում էի քո կոշիկները կեղտոտել: Ների՛ր ինձ, ես վատն եմ, – Միան անօգնական նայում էր իր կեղտոտ գուլպային, որից վատ հոտ էր գալիս:

– Ես քեզ կօգնեմ, – ասաց Վիոլան և ձեռքը մեկնեց Միային, – գնանք ծորակի մոտ: Այնտեղ կարող ես լվանալ ոտքդ: Բայց այ սա..., – նա ցույց տվեց կոշիկները, – ստիպված ես դեն նետել: Քեզ նոր կոշիկ պետք կլինի:

– Ինչու՞ ես դու ինձ հետ այդքան բարի, չէ՞ որ ես ուզում էի վնասել քեզ, – զարմացած հարցրեց Միան:

Վիոլան ժպտաց.

– Որովհետև ես գիտեմ, թե դու որքան վատ ես զգում քեզ հիմա: Ես նույնպես հաճախ վատ եմ վարվում: Դրա համար էլ ինձ անհրաժեշտ է Տեր Հիսուսը: Նա ինձ հասկանում և ներում է: Մի օր արի մեր տուն, ես քեզ ավելին կպատմեմ Նրա մասին:

– Իրո՞ք: Ինչ լա՜վ է, – ուրախացավ Միան, – ես կգամ քեզ մոտ:

Վիոլան քաշեց Միայի թևքը.

– Բայց նախ մենք պետք է քո ոտքից մաքրենք այդ գոմաղբը: Ամեն դեպքում քեզանից սարսափելի հոտ է գալիս:

Միան ծիծաղեց: Նրա գլխում հանկարծ միտք ծագեց. լավ ընկերուհին շատ ավելի կարևոր է, քան սիրելի պոնին:

Նկ. Մարիկյա Ռուդսկա

Արև, Երկինք

Հեղինակն անհայտ է



3. Ձկներ ջրում լողացող,
Ճայեր օդում սլացող:

4. Երամները երկնքում,
Ծաղիկները դաշտերում:

5. Պայծառ աստղերն են վառվում,
Ինձ Աստծո մասին պատմում:

Նոտագրեց Անահիտ Սարգսյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՆՁԵՐԸ

Թամարա Լամբրիանովա

Սիրելի՛ փոքրիկ բարեկամ, դու երևի լսել ես, որ Հայաստանը հաճախ անվանում են «թանգարան բաց երկնքի տակ»: Դրա պատճառն են ինչպես մեր երկրի չքնաղ բնությունը, որ մեզ է պարգևել Արարիչը, այնպես էլ Նրա օրհնությամբ մեր նախնիների կերտած հիասքանչ կոթողները. օրինակ՝ մեր եկեղեցիներն ու վանքերը: Հայկական ճարտարապետությանը հատուկ են կամարակապ նախշազարդ պատուհաններն ու դռները, որոնք կարելի է տեսնել ինչպես եկեղեցիներում, այնպես էլ քաղաքային ճարտարապետության մեջ: Այսուհետ եկեղեցիներ այցելելիս կամ թեկուզ Երևանով զբոսնելիս ուշադի՛ր եղիր, ու կնկատես հայ վարպետների այդ նուրբ ու սիրուն աշխատանքները:

Հայ քարտաշ վարպետների ևս մեկ սքանչելի ստեղծագործություն է խաչքարը: Գեղեցիկ ու յուրահատուկ նախշերով հարուստ խաչեր, որ քանդակված են մի մեծ քարակտորի վրա: ՅՈՒՆԵՍԿՕ-ն խաչքարը ներառել է մարդկության մշակութային ժառանգության ցանկում: Հայաստանում կան ավելի քան 50000 ձեռատաշ խաչքարեր: Տարբեր դարաշրջանների ավելի քան 1000 խաչքարեր գտնվում են Սևանա լճի մոտակայքում՝ Նորատուս գյուղի խաչքարերի համալիրում, որն այսօր մեծագույնն է՝ Ջուղայի խաչքարերի ոչնչացումից հետո:

Հայաստանի գանձերից է նաև Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղի գրանցված, «Տաթևեր» ճոպանուղին, որն իրար է կապում Տաթևի վանքը և Հալիձորը: «Տաթևեր» ճոպանուղու երկարությունը 5752 մ է, իսկ առավելագույն բարձրությունը՝ 320 մ:

Հայաստանի գանձերից հաջորդը մեր ամենաքաղցրահամ ու սիրելի միրգն է, որի միջազգային անվանումն է հենց Prunus armeniaca, կամ Armenian plum: Խոսքն, անշուշտ, մեր անուշահամ ծիրանի մասին է, որի ոչ միայն պտուղներն են շատ համեղ ու օգտակար, այլև կորիզները, և, որքան էլ զարմանալի է, նաև ծառի փայտը: Չէ՞ որ հենց ծիրանենու փայտից է ստացվում լավագույն դուդուկը, որը կոչվում է նաև ծիրանափող: Ի դեպ, 2005 թ. դուդուկի նվագը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ոչ նյութական մշակութային ժառանգության գլուխգործոց:

Հայաստանի գանձերից ևս մեկը Քարահունջի «Զորաց Քարեր» կոչվող հնագույն մեգալիթյան համալիրն է, հնագույն աստղադիտարան, որը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի մոտակայքում: Երկու հարյուրից ավելի ուղղահայաց կանգնած, մինչև 3 մ բարձրության քարերի (մենհիրներ) կեսից շատն ունեն անցքեր, որոնց տրամագիծը 5-7 սմ է:

Եվ իհարկե, Հայաստանի գանձերից մեծագույնը հայոց տառերն ու հայ գիրն է, որի հնագույն նմուշների պահոցը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանն է: Մատենադարանի ամենամեծ ձեռագիրը կոչվում է «Մշո ճառընտիր»: Այն կշռում է 28 կգ, ունի 601 թերթ: Հայերեն ամենափոքր ձեռագիրը «Եկեղեցական տոնացույց» - ն է, որը գրվել է 15-րդ դարում, Ղրիմում: Այն անհավանական թեթև է, կշռում է ընդամենը 19 գր: Ունի 104 թերթ:

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԻ ՆՄԱՆ

Էլվիրա Ցորն

Աշխարհում այնքան էլ շատ չեն այն թռչունները, որոնք միանգամից երեք տարերքների կարիքն ունեն. օդի, հողի և ջրի: Մենք պատկանում ենք նրանց թվին: Օդում մենք անցկացնում ենք ժամանակի մեծ մասը: Ջրում սնունդ ենք հայթայթում: Իսկ հողում բներ ենք փորում և բազմանում:

Մենք փոքր թռչուններ ենք, ճնճղուկներից մի փոքր խոշոր, բայց մարդկանց ուշադրությունը գրավում ենք մեր յուրահատուկ տեսքով, գունավորմամբ և խորհրդավոր վարքով: Մենք ունենք բավականին մեծ գլուխ, երկար ուղիղ կտուց, կարճ թևեր, արտասովոր կարճ պոչ և փոքրիկ ոտքեր: Մեջքը երկնագույն-կանաչ է՝ փայլուն ցոլքով: Մեր գլխին և թևերին կան բաց գույնի փոքրիկ բծեր: Վզիկը սպիտակ է, փորիկը՝ շիկակարմրավուն, ոտքերը՝ կարմիր: Մեզ տեսնելն այնքան էլ հեշտ չէ, քանի որ մենք այնքան էլ շփվող չենք: Մենք իսկական ինտրովերտներ ենք, խուսափում ենք թե՛ մարդկանցից, թե՛ կենդանիներից: Բայց ում բախտ վիճակվի տեսնել մեզ, կնկատի, որ մոտիկից մեր երանգավորումն այնքան էլ տոնական չէ, նույնիսկ փոքր-ինչ խամրած է: Սակայն շարժման մեջ, լույսի բեկման արդյունքում, զմրուխտե-երկնագույն փետուրները փայլում են և արևի տակ շողշողում՝ թանկարժեք քարի նման: Եվ թվում է, թե մեծ, պայծառ թիթեռ է ճախրում:

Մենք գերադասում ենք ապրել ջրամբարների մոտակայքում և մեծ պահանջներ ունենք բնի վայրի հանդեպ: Ջուրն այնտեղ պետք է մաքուր և հոսող լինի, իսկ ջրամբարը՝ ոչ շատ խորը: Սնվում ենք մանր ձկներով, երբեմն որսում ենք քաղցրահամ ջրերի ծովախեցգետիններ: Իսկ եթե ձկնորսությունն անհաջող է եղել, ապա չենք զզվում նաև միջատներից, գորտերից, ճպուռների թրթուրներից: Մեզանից յուրաքանչյուրը կարող է օրական մինչև 12 ձուկ որսալ և ուտել:



Մեզ համար որպես տուն է ծառայում ջրամբարի զառիվայր ափին փորված բույնը: Այն պետք է լինի մեկ մետր կամ ավելի բարձրության վրա, իսկ մուտքը թաքնված լինի թփերի, ծառերի ճյուղերի կամ արմատների հետևում: Դա հորիզոնական թունել է մինչև մեկ մետր երկարությամբ, վերջում լայն բացվածքով, որը հենց բույնն է: Ձվից դուրս եկած ճուտիկները մեծանում են մթության մեջ: Կերակրման ժամանակ նրանք նստում են շրջանաձև: Հենց որ ձագերից մեկը սնունդ է ստանում, շրջանը «պտտվում է», այնպես որ, ոչ ոք նեղացած չի մնում: Երեք-չորս շաբաթ անց ճուտիկները լքում են բույնը, բայց դեռ մի քանի օր հետևում են մեզ, և մենք շարունակում ենք կերակրել իրենց, որից հետո նրանցից յուրաքանչյուրն ինքնուրույն կյանք է սկսում:



Ահա և դու ծանոթացար մեզ հետ: Մեր անունն է սովորական ալկիոն, կամ երկնագույն ալկիոն: Իտալերեն և հին ֆրանսերեն մեր անունը հնչում է որպես «դրախտային թռչուն», գերմաներեն՝ «սառցե թռչուն», իսկ անգլերենից թարգմանաբար՝ «ձկնորս թագավոր», քանի որ մենք շատ վարպետորեն ենք ձուկ որսում:

Սիրելի՛
ընթերցող,
դու ունե՞ս
աստվածաշնչյան սիրելի
համար: Գրի՛ր մեզ և
պատմի՛ր, թե ինչու ես
այն սիրում: Մենք ուրախ
ենք քո ամեն նամակի
համար:

Գոռ Տեր-Սահակյան 11տ.,
ք. Վանաձոր

Ալեքսանդրա Ռադկե 8 տ., Գերմանիա

Անաստասիա Ռադկե 6 տ.,
Գերմանիա

Սիոնա Տեր-Սահակյան 6տ.,
ք. Վանաձոր

Արայիկ Հարությունյան 6տ.,
ք. Արարատ

Արահետ 4/21 (22)

«ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» Բարեգործական հասարակական կազմակերպություն:
Մանկական քրիստոնեական ամսագիր:
Լույս է տեսնում տարեկան 6 անգամ:

Ռուսերեն ամսագիրը հրատարակվում է 1990թ. - ից:
Այն հրատարակվում է ռուսերեն, ուկրաիներեն, գերմաներեն, ղազախերեն, ղրղզերեն, բուլղարերեն, ռումիներեն և վրացերեն: 2018թ. - ից՝ նաև հայերեն:

Տպագրվում է կամավոր նվիրատվությունների միջոցով, բաժանվում է անվճար:

Գլխավոր խմբագիր՝ Վալդեմար Ցորն

Հայկական ամսագրի գլխավոր խմբագիր՝ Նինա Կոստանյան
Ամսագրի աշխատակազմ՝ Անահիտ Սարգսյան, Թամարա Լամբրիանովա
Արփինե Մինասյան

Ամսագրին կարող եք բաժանորդագրվել
և ուղարկել նամակներ և նյութեր «Արահետ»
ամսագրի խմբագրություն՝ հետևյալ էլ. հասցեով
E-Mail. arahetarm@yandex.ru
Հեռ. +374 98 38 51 38

էջ 10. Լուսանկարը՝ ©Emma Frances Logan / unsplash.com
էջ 22-25. «Jeden Tag Gottes Wunder erleben» © BOAS media e. V. ISBN 978-3-942258-25-8
էջ 28-29. Լուսանկարը՝ © Saad Chaudhry/ unsplash.com

Ռուսերենից թարգմանեց Թամարա Լամբրիանովան

Համակարգչային ձևավորումը՝ Դավիթ Հարությունյանի

Կազմի լուսանկարը՝ *©LightField Studios / shutterstock.com*

Կրտսեր և միջին տարիքի դպրոցական երեխաների համար

Աստվածաշնչյան մեջբերումները վերցված են «ԱՐԱՐԱՏ» և «TBS» թարգմանություններից:

© «Լույս Արևելքում», 2021թ.

www.lio.ru/tropinka

ՄԱԳԱԶԱԹ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Դասախոսություններ

Էջ 2. Իրական գանձ:

Սի՛րելի ընթերցող, ուղարկի՛ր մեզ քո նկարած նկարը կամ քո կազմած խաչբառը, և մենք ուրախությամբ այն կհրապարակենք Արահետ ամսագրում:

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ